Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի Օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բերդի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Թեմա՝ Գնահատում , գնահատման տեսակներ , գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում :

Վերապատրաստող , մենթոր՝ Էմմա Քոսակյան

Ուսուցիչ՝ Հասմիկ Բալդրյան

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Ներածություն……3

Գլուխ 1. Գնահատում , գնահատման տեսակներ , գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում :……5

1.1 Գնահատում……5

1.2 Միավորային գնահատում……..7

1.3 Ձևավորող գնահատում……9

Գլուխ 2 . Ձևավորող գնահատման իրականացման օրինակներ……14

Եզրակացություն……16

Գրականության ցանկ…….....18

Ներածություն

Կրթության մատչելիությունն ու հասանելիությունը՝ որպես հասարակության զարգացման ու առաջընթացի հիմնական միջոցներ , ամրագրվել են դեռևս 1990 – ական թվականներին ։

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու , թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը ։

Մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է ։ Եթե հաջողվի գրավել ուշադրությունը , կհաջողվի սովորեցնել սովորել , կարևորել սովորելը։ Ժամանակակից երեխան զբաղված է սերիալներ դիտելով համակարգչային տարատեսակ խաղերով , սոցիալական տարբեր հարթակներում գայթակղիչ տեսաֆիլմեր դիտելով և այլն ։ Եվ այս պարագայում ուսումնարության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը բավականին բարդ է ։

Աշակերտների ուշադրությունը գրավելուց հետո տեղեկությունների տարափ տեղալով ՝ մենք նորից նրան ապակենտրոնացնում ենք ։ Գիտնականները հաստատում են , որ մարդը միանգամից կարող է սովորել առավելագույնը 9-10 բան ։

Մեր կրթական համակարգում հիմա գործածության մեջ են դրված դասագրքեր , ուսումնական նյութեր,որոնց մեջ միանգամից մի քանի տասնյակ նոր անուններ , եզրույթներ , հասկացություններ, պատմություններ կան ։ Այդ ամենը անհնար է մտապահել կարճաժամկետ հիշողության մեջ ։ Ուստի ուսուցիչը պետք է հմտորեն գործածի աղյուսակներ , սանդղակներ մեջբերվող այլ զրույցներ , որոնք կապ ունեն ուսուցանվող նյութի հետ ։

Տրվող նոր գիտելիքները պետք է ամբողջապես կապակցված լինեն ։

Ուսուցման գործընթացում մենք հաճախ կարևորում ենք գիտելիք տալը , բայց պարզվում է , որ սովորելու չափանիշը իմացածը մտաբերելն է ։

Վերջերս շատերը փորձում են գիտելիքն ու մտածողությունը հակադրել իրար , որ մեր խնդիրը գիտելիք ունենալը չէ , Google – ը ամեն ինչ գիտի , մեր խնդիրը մտածողության հմտությունները զարգացնելն է ։ Սակայն մենք համաձայն չենք դրան և համոզված ենք , որ ուսուցման հիմքը գիտելիքն է ։ Առանց գիտելիքի ոչ մի բժիշկ չի կարող լավ վիրահատություն անել , տեխնիկան չի զարգանա , տիեզերքը չի նվաճվի ։

Հասարակական կյանքի բոլոր ոլորտների կարևոր բնութագրիչներից է գնահատումը կամ գնահատական տալը ։

Աշխատող մարդու աշխատանքի գնահատումը արտահայտվում է աշխատավարձով, պարգևավճարով , կարգի բարձրացմամբ , մարզիկի աշխատանքը՝ մեդալով,դրամական պարգևով , արտիստինը՝ տոմսերից ստացված հասույթով , ծափերով և այլն ։

Եթե մենք ընդունում ենք , որ սովորողը պարապում է , աշխատում է , պարզ է , որ սա ևս ենթադրում է գնահատում ։

Հետազոտության նպատակն է ուսումասիրել գնահատումը , գնահատման տեսակները , գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում ։

Հետազոտության խնդիրներն են՝

1.Ուսումնասիրել գնահատման վերաբերյալ տեսական նյութեր ։ Բնութագրել գնահատման տեսակները , նշել առավելությունները, թերությունները , առանձնահատկությունները , դրանց կիրառման նպատակահարմարությունը և արդյունավետությունը ։

2.Կիրառել գնահատման տեսակները և գործիքները դասավանդման շրջանակներում։

3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և կազմել եզրակացություն։

Վարկած՝ մենք կարծում ենք , որ գնահատման առաջարկվող բոլոր տեսակներն էլ զուգահեռաբար կիրառելի են ։

Ընտրանք ՝ 5-7-րդ դասարանի աշակերտներ

Մեթոդներ՝ փաստաթղթերի ուսումնասիրում, դիտում, համեմատում ։

Գլուխ 1. Գնահատում , գնահատման տեսակներ , գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում ։

1.1 Գնահատում

Գնահատումը կրթական ոլորտում գիտելիքի , իմացական մակարդակի արտահայտության ցուցիչ է ։ Սակայն վերջերս այն դարձել է նաև սովորողների հնարավորությունների բացահայտման , առաջընթացի խթանման , ուսումնական մոտիվացիայի ձևավորման , սովորողի անձի ընդհանուր զարգացման վրա մեծապես ազդող գործոն ։ Գնահատում է մարդը՝ ինքը ։ Մարդու արարքը գնահատում են շրջապատը , դիմացինը , վերադասը ։

Իսկ ի՞նչն ենք գնահատում ։ Առհասարակ գնահատվում է մարդու արարքը , պահվածքը , վերաբերմունքը , գիտելիքները , դիրքը հասարակության մեջ , բնատուր շնորհքը , աշխատասիրությունը , կարողությունը ։

Ժամանակակից կրթական համակարգում սովորողների ընթացիկ և ամփոփիչ գնահատումը իրականացվում է միավորային և ձևավորող գնահատմամբ ։

<u>Գնահատումն ուսուցում է</u>

<u>Ձևավորող գնահատում</u>

. Ցուցադրություն
. Ելքի քարտ
. Գծապատկերների կազմում
. Հարցազրույց
. Ինքնագնահատում
. Զույգերով փոխադարձ գնահատում

. Խմբային աշխատանք
. Էսսե
. Հարցարանային աշխատանք
. Հետազոտություն
. Ներկայացում
. Թղթապանակ

<u>Ամփոփիչ գնահատում</u>

. Թեստեր
. Ամփոփող նախագիծ
. Կիսամյակային ամփոփիչ աշխատանք ,որը կարող է լինել գործնական աշխատանքի բանավոր հարցման կամ գրավոր աշխատանքի միջոցով ։

Գնահատման արդյունքում կատարված հետևություններ

1. Նպատակների ճշգրտում
2. Գործիքների կիրառում
3. Տվյալների կուտակում
4. Տվյալների վերլուծություն
5. Արդյունքների իմաստավորում, մեկնաբանում



/ Աղյուսակ 1 /

Ռուբրիկ / Սանդղակ/

Ռուբրիկը գնահատման հնար է , ձև , որը հնարավորություն է տալիս հստակ գնահատել նախօրոք սահմանված չափանիշների միջոցով:

Ընդհանուր գնահատման սանդղակ

Առաջադրանքը լիովին կատարված է:

Առաջադրանքը հիմնականում կատարված է:

Լրացուցիչ ցուցումների կարիք չկա:

Սխալների թեթևակի ուղղման կարիք կա:

Առաջադրանքը մասամբ է կատարված:

Լրացուցիչ ցուցումների կարիք կա:

Առաջադրանքին անդադարձել է։

Լրացուցիչ ցուցումների մեծ կարիք կա։

Առաջադրանքը կատարելու փորձ չի արել կամ անհամապատասխան լուծում է տվել հարցին։

1.2 Միավորային գնահատում

Միավորային գնահատման ժամանակ գնահատման նիշերի միջոցով չափվում և գնահատվում են սովորողի՝ չափորոշչով և ծրագրով սահմանված գիտելիքները ։

Միավորային գնահատումը ստուգող գնահատում է ։ Ազդեցիկության և որոշիչ լինելու առումով գերակշռում է միավորային գնահատումը ։ Ներկայում մեր կրթական համակարգում գործում է 10 բալանոց միավորային գնահատում , որի յուրաքանչյուր թիվ նշանակում է սովորողի գիտելիքի որոշակի մակարդակ ։ Այստեղ անբավարար չկա։ Սա առաջ է բերում մի շարք խնդիրներ ։ Եթե տարբերակում չկա աշխատելու և չաշխատելու միջև , ուրեմն չկա և մոտիվացիա ։ Բաղց կա և հարցի մյուս կողմը. սովորողը կարող է ինչ-որ ձևով հաղթահարել հաջորդ մակարդակը։ Գնահատականը երբեք չպետք է լինի աշակերտին պատժելու միջոց։

Միավորային գնահատման բացերից է նաև այն , որ հաճախ ցածր նիշ ստացող աշակերտը մտածում է , որ ինքը 4 – ի աշակերտ է , չի կարող բարձր ստանալ ։ Նրա ինքնագնահատականը ընկնում է , և ուսումնառության նկատմամբ հետաքրքրությունը

թուլանում է կամ մարում ։ <<Կրթական գործընթացի ժամանակակից մոտեցումներում , որպես սկզբունք , նվազեցվում է միավորային կամ նիշային գնահատման վրա սևեռվելը՝ հօգուտ ձևավորող աշխատանքների , գործնական աշխատանքների ու գիտելիքների կիրառությունների>> ։ [Օ. Ս. Միքայելյան, 2010թ]

Գնահատումը իրականացվում է ախտորոշման միջոցով։ Ախտորոշումը սովորողի ուսումնական գործունեության վերաբերյալ եզրակացություն է ։

Այսինքն՝ գնահատումը վերահսկող գործառույթ ունի։ Այն ինչ-որ չափով նաև կանխատեսում է գիտելիքի, հմտության զարգացման ընթացքը ։

Գնահատումը նաև նպատակադրում է ։ Այսինքն՝ աշակերտը հասնում է սահմանված արդյունքին , անցնում է առաջ, անում է հաջորդ քայլը ։

Գնահատումը պետք է լինի անկողմնակալ,արժանահավատ , համարժեք ու թափանցիկ ։

Սովորողը պետք է մշտապես մասնակից լինի գնահատման գործընթացին , հասկանա իր բացթողումը , միավորի կորուստը , գնահատման չափանիշը ։ Եթե բանավոր հարցման ժամանակ միավորը ձևավորվում է ճիշտ ընթերցելու , մտքերը գրագետ ձևակերպելու , կուռ ու տրամաբանված ներկայացնելու , սեփական տեսակետը համոզիչ ներկայացնելու միջոցով , ապա գրավոր խոսքում դրան ավելանում են ուղագրական և կետադրական կանոնները պահպանելը , քերականական և բառակազմական սխալները բացառելը, պարբերությունները առանձնացնելը և այլն ։

Ուստի սովորողը պետք է իմանա , որ գնահատման ժամանակ ամեն ինչ կարևոր է , և որ սխալը ինչ արժե ։

Չափորոշիչների նոր նախագծի համաձայն՝ աշակերտները միավորային գնահատական չեն ստանա մինչև 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակ ։ 10 բալանոց համակարգը կունենա զուտ քանակական գնահատման նշանակություն ։[ՀՀ Կառավարության N439 որոշման նախագիծ]:

Նոր խնդիր է , թէ մինչև 5-րդ դասարան չգնահատված աշակերտին գնահատելու դեպքում արդյոք անցումը կարող է սահուն լինել և նոր ցնցում ու սթրես չի պարունակում սովորողի և ուսուցչի համար ։

Գնահատման արդյունքն արտահայտվում է պաշտոնապես ընդունված միավորների սանդղակով՝ գնահատականներով:

Գնահատումն իրականացվում է 10 միավորային սանդղակով

Միավոր	Անվանում
10	«բացառիկ»
9	«գերազանց»
8	«շատ լավ»
7	«լավ»
6	«միջինից բարձր»
5	«միջին»
4	«բավարար»
3	«անբավարար»
2	«վատ»
1	«շատ վատ»

/ Աղյուսակ 2 /

1.3 Ձեւավորող գնահատում

Ձևավորող կամ ուսուցանող գնահատումը սովորողների համար հետադարձ կապ է , որը թույլ է տալիս նրանց՝ որոշելու , թէ ինչ քայլեր պետք է իրենք ձեռնարկեն իրենց արդյունքները բարելավելու համար : Ձևավորող գնահատման նպատակն է նպաստել յուրաքանչյուր աշակերտի անհատական որակների զարգացմանը: Գնահատման այս եղանակը ենթադրում է .

Արդյունավետ ուսուցում
Մոտիվացիայի ապահովում
Նպատակների հստակեցում
Ինքնագնահատում
Փոխադարձ գնահատում

Ինքնուրույն ուսումնառության խթանում ։
Ձևավորող գնահատման ժամանակ կարևոր է, որ սովորողը գնահատվի ոչ թէ ուրիշների հետ համեմատվելով , այլ իր ՝ մինչ այդ գործադրած ջանքերի և գրանցած արդյունքների համեմատ ։
Առանց հայտորոշման ուսուցիչը չի կարող անհրաժեշտ մակարդակով կիրառել ձևավորող գնահատումը , որը իր հերթին ազդում է միավորային գնահատման վրա ։
ՁԳ - ն կիրառվում է թէ՛ ուսուցչի , թէ՛ սովորողի համար ընդունելի հնարներով ։
Ուսուցման գործընթացում գնահատման օբյեկտը սովորողի գործունեությունն է, ոչ թէ սովորողը ։
ՁԳ – ն՝
1)ուսուցչի և սովորողների հետադարձ կապն է ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով ,



/ Աղյուսակ 3 /

2) սովորողի ակտիվ մասնակցությունն է սեփական ուսումնառության գործին,

3)ճշգրտում,շտկում ՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները,

4)սովորողների մոտիվացիայի և ինքնագնահատականի վրա խորքային ազդեցության գիտակցում,որն իր հերթին կարևոր ազդեցություն ունի ուսուցման արդյունավետության վրա,

5) սովորողների կողմից իրենց գիտելիքների ինքնուրույն գնահատման ունակության ձևավորում։

ՁԳ – ի սկզբունքները.

1. Երեխայի հաջողության հիմնական ցուցանիշներն են ՝ զարգացման անհատական դինամիկան և սովորելու ցանկությունը ։

2. Հնարավորություն է տալիս բոլոր երեխաներին ակտիվորեն մասնակցել ուսումնական գործընթացին ։

3. Երեխայի հաջողության ցուցանիշները հնարավոր է ձևավորել միայն անհատական մոտեցմամբ։

4. ՁԳ – ի համակարգը գործընթաց է , որը հիմնված է սովորողների կրթական նվաճումների համեմատության վրա ։

Ձևավորող գնահատումը ուսուցչից պահանջում է .

1. նյութեր կազմել և կիրառել,

2. ապահովել բոլոր սովորողների ներգրավվածությունը,

3. անհատական մոտեցում ցուցաբերել սովորողների կարիքներին,

4. առաջարկներ անել ուսումնական ծրագրի բարելավման ուղղությամբ,

5. բարելավել դասավանդման որակը,

6. կիրառել գնահատման բազմազան գործիքներ,

ՁԳ- ի գործիքներ

1. Բանավոր հարցման գնահատման սանդղակ ։

2. Գնահատման անիվ ։

3. Գնահատման 5 գաղափար ։

4. Փոխադարձ գնահատում ։

5. Ինքնագնահատում ։

6. Հայտորոշիչ թեստ ։

7. Խոսքի զարգացում – դերային խաղ ։

8. Գրավոր աշխատանք ։

9. Գործնական աշխատանք ։

Բանավոր հարցումը մայրենիի դասին 5-րդ և 6-րդ դասարաններում հարմար է կրառել ։ Սանդղակում ըստ ամիսների նշում ենք աշակերտի ուսումնառության ընթացքը ։

Սեպտեմբեր – Խոսքը չի համապատասխանում թեմային ։

Մտքերը անհասկանալի են։

Հոկտեմբեր – Խոսքը կառուցում է թեմայի շուրջ ։

Նոյեմբեր –Խոսքը համապատասղանում է թեմային , ձևակերպում է ինքնուրույն մտքեր։

Դեկտեմբեր – Պարզաբանում է պատճառահետևանքային կապերը լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում ։

Փոխադարձ գնահատումը իրականացվում է հետևյալ տարբերակներով ՝ սովորողը ՝ սովորողին , խումբը ՝ խմբին , սովորողը ՝ խմբին , խումբը ՝ սովորողին ։

Մենք ուրախանում ենք ուրիշի հաջողությամբ , օգնում ենք նրան անհաջողության դեպքում ։

Այս գնահատման միջոցով սովորողները հասկանում են իրենց ուժեղ և թույլ կողմերը , սխալները, ստանում են նոր հանձնարարություններ ։ Այստեղ կարևոր է , որ դասընկերոջը գնահատող սովորողը լինի օբյեկտիվ , նշումները, ուղղումները կատարի պարզ , հասկանալի ։ Անհրաժեշտ արդյունք արձանագրելու համար պետք է ապահովել համագործակցային , մոտիվացնող միջավայր , միմյանց գնահատելու , սովորեցնելու , կապ ստեղծելու ցանկություն ։

Պետք է նախապես պլանավորել առաջադրանքը , գնահատման սանդղակը, հիմնավորել փոխադարձ մեկնաբանությունները ։

Ինքնագնահատումը երևում է վերջնարդյունքներ ստուգելիս։ Սովորողը ձեռք է բերում ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն , քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրում է սովորածը ։

Գրավոր աշխատանք . թելադրություն

Ուսուցիչը տեքստից դուրս է բերում սխալ գրված բառերի ճիշտ տարբերակները և հրահանգում, որ աշակերտը տեքստում գտնի դրանք և ուղղի ։ Կանաչ գրիչով ընդգծում է նոր սովորած բառերը , որ ճիշտ է գրել , իսկ կարմիրով ՝ սխալները ։ Առաջարկում է գրել դրանց ճիշտ ձևերը՝ սովորելով բառարանից ։

Գործնական աշխատանք . դրանք բազմազան են՝ պաստառի ձևավորում , էքսկուրսիայի ընթացքում տեսածի և լսածի ներկայացում, նախագծի իրականացում ։ Այս աշխատանքները կարող են իրականցվել ինչպես անհատապես , այնպես էլ խմբային աշխատանքի շրջանակում , տանը , դպրոցում ։

Հետադարձ կապ . լինում է արտաքին և ներքին ։ Արտաքին կապն ապահովում է ուսուցիչ – սովորող , սովորող – ուսուցիչ կամ սովորող – սովորող կապերը ։

Ներքին կապը ուսուցչի և սովորողների սեփական գործողությունների նկատմամբ կատարած ինքնաանդրադարձն է ։ Ուսուցիչը բացահայտում է իր գործողությունների ստացված և չստացված պահերը դրանց հիման վրա պլանավորում հետագա գործողությունները , իսկ աշակերտը, իր աշխատանքը վերլուծելով , բարելավում է իր ուսումնառությունը ։ Այդ ամենը իրականացվում է բանավոր զրույցի , գրավոր մեկնաբանության , գծապատկերների , տեսագրության և այլ միջոցներով ։

Թէ՛ միավորային , թէ՛ ձևավորող գնահատումները իրագործվում են որոշակի ընթացակարգով , կանոններով , որոնք վերաբերում են սովորողի աշխատանքի որակին՝ սովորողի ձեռքբերումների տեսանկյունից ։

Երկուսի դեպքում էլ պահանջվում են հարց – առաջադրանքներ ։ Միավորային գնահատման ժամանակ դրանք ինչ-որ չափով տեղեկատվական փաստեր բովանդակող նյութեր են , իսկ ՁԳ – ի ժամանակ ուսուցանող բնույթ ունեն ։ ՁԳ – ի նպատակով տրվող առաջադրանքները բացահայտում են սովորողի տրամաբանությունը , ինքնուրույն դատողություններ անելու կարողությունը , բացահայտվում են սովորողների ուսումնական կարիքները ։ Ուսուցիչը և աշակերտը պարզում են ոչ միայն գիտելիքի, հմտության յուրացման չափը , այլև որակը և փորձում են գտնել դրանց յուրացման նոր ուղիներ ։ Ուսուցիչը պետք է սովորելու համար նպաստավոր միջավայր ապահովի, որպեսզի սովորողը կարողանա ազատ և անկաշկանդ մտածել , փնտրել , հետազոտել , վարկածներ մշակել , կարծիք հայտնել

և այլն ։

/Աղյուսակ 4/

Գլուխ 2 . Ձեւավորող գնահատման իրականացման օրինակներ

Հետազոտության նպատակն է ուսումասիրել գնահատումը , գնահատման տեսակները , գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում ։

Հետազոտության խնդիրներն են՝

1.Ուսումնասիրել գնահատման վերաբերյալ տեսական նյութեր ։ Բնութագրել գնահատման տեսակները , նշել առավելությունները, թերությունները , առանձնահատկությունները , դրանց կիրառման նպատակահարմարությունը և արդյունավետությունը ։

2.Կիրառել գնահատման տեսակները և գործիքները դասավանդման շրջանակներում։

3. Կատարել արդյունքների ամփոփում, վերլուծություն և կազմել եզրակացություն։

Վարկած՝ մենք կարծում ենք , որ գնահատման առաջարկվող բոլոր տեսակներն էլ զուգահեռաբար կիրառելի են ։

Ընտրանք ՝ 5-7-րդ դասարանի աշակերտներ

Մեթոդներ՝ փաստաթղթերի ուսումնասիրում, դիտում, համեմատում ։

<u>Բառ – թելադրություն</u>

Ուսուցիչը մի քանի աշակերտների հրավիրում է գրատախտակի մոտ, թելադրում ուղղագրական որևէ կանոնի վերաբերող բառաշարք ։ Դասարանը ևս գրում է ։ Հետո աշակերտները կատարում են փոխադարձ ստուգում ։ Ուսուցիչը ստուգում է և ՛ գրողին, և՛ ստուգողին ։ Դասարանը ինքնաստուգում է իրականցնում ՝ համեմատելով գրատախտակի գրվածի հետ ։ Հետո նշում են սխալները և հիմնավորում ճիշտը ։

<u>Ուսուցողական ստեղծագործական շարադրություն</u>

Սա գրավոր խոսքի զարգացման ձևերից մեկն է ։ Կարևոր է թեմայի ընտրությունը. այն պետք է համապատասխանի աշակերտների տարիքին, հուզական դրսևորումներին ։ Նախապես ուսուցիչը կարող է մեջբերել մի պատմություն , որը ինչ- որ առնչություն կամ նմանություն ունի ընտրված վերնագրի հետ ։ Աշակերտները կքննարկեն ,կարտահայտեն իրենց կարծիքը , մոտեցումը , կարժևորեն հերոսի արարքը և կգրեն շարադրությունը ։

Տեղին է նշել , որ ստեղծագործական աշխատանքներին շատ ժամանակ հատկացնել հնարավոր չի լինում , աշակերտների մեջ պակաս է պատկերավոր ծոսք կազմելու ձգտումը , հմտությունը ։

Հեքիաթի կամ պատմվածքի հերոսի արարքի մեկնաբանում ։ Աշակերտը կարող է կողմ կամ դեմ լինել համաձայնել կամ չհամաձայնել , նոր վերնագրի ընտրել , նոր ավարտ հորինել , սեփական դիրքորոշում ունենալ ։

<u>Առաջարկել ենք պնդումներով հարց – առաջադրանքներ (ճիշտ է, սխալ է)</u>։

Արմատի և ածանցի ուսումնասիրության ժամանակ կատարում ենք արմատների տեղաշարժ ՝ բացատրելու արմատի իմաստակիր անբաժանելի միավոր լինելը ։

Օրինակ ՝ ջրափոս – աղաջուր – ընդջրյա

Ջրծաղիկ – ծաղկման – վարդածաղկավոր

Т – աձև աղյուսակով առանձնացնել հնչյունափոխված և անհնչյունափոխ արմատները ։

Կատարել բառի բառակազմական վարլուծություն։

Կազմել բառեր տրված բառակազմական կաղապարներով .

Արմատ + հոդակապ + արմատ

Արմատ + արմատ

Ածանց + արմատ + ածանց

Արմատ + ածանց +արմատ

Կազմել հոմանշային շարքեր

Համանունները գործածել նախադասությունների մեջ ։

Բառաշարքում գտնել ավելորդը ։

Անհատական առաջադրանքներ ։

Առաջադրանքներ զույգերով կատարելու համար ։

5-րդ և 6 –րդ դասարանների համար առաջարկված ուսումնական նյութերը բավականին տարողունակ են և ուսուցանող , հագեցած հետաքրքիր և տարաբնույթ առաջադրանքներով ։

Կյանքը հոսում է տարբեր ուղղություններով, իսկ այդ ուղղությունները որոշելու համար անհրաժեշտ են չափորոշիչներ։Որքան մարդը վերլուծական մտածողությամբ է օժտված,այնքան նրա ընտրած չափորոշիչները համահունչ են կյանքին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ սովորողի ուսումնառության գնահատումը անհրաժեշտ և կարևոր է կրթության ախտորոշման,հայտորոշման,խթանման,բարելավման և այլ տեսանկյուններից:

Կարծում ենք,որ սովորող-ուսուցիչ-ծնող կապը պետք է լինի պատշաճ մակարդակի վրա, որովհետև կրթության գործընթացի մասնակից է նաև ծնողը: Անհրաժեշտ է, որ այս եռյակի նպատակը լինի նույնը. ծնողը չպայքարի գնահատականի համար, ինչպես հաճախ է լինում:



/ Աղյուսակ 5/

Եթե միավորային գնահատումը տեղի զիջի,աստիճանաբար լուծվի ձևավորողի մեջ,կփոխվեն պահանջները,բայց,կարծում ենք, մեր կրթական համակարգը դեռևս պատրաստ չէ այդպիսի անցման:

Անցումը տարրական դպրոցից հիմնական դպրոց պետք է կատարվի հստակ,թափանցիկ,չափելի բնութագրիչներով, սովորողների հմտությունների ու կարողությունների ռեալ բնութագրմամբ:

Դիտարկումները ցույց են տալիս,որ կրթության որակի անկում արձանագրվում է միջին դպրոցում:Եթե հաշվի առնենք,որ բազմաթիվ առարկաներ սկսում են ուսումնասիրել 5-9-րդ դասարաններում,մի քանի ուսուցիչներ են սկսում աշխատել աշակերտների հետ,հոգեբանական այս գործոններին ավելանում է նաև այն,որ ծնողները երեխաներին <<մեծ>> են համարում և հաճախ թողնում են ինքնուրույն,պատճառը պարզ կդռանա:

Եթե միջին դպրոցում բացառվի միավորային գնահատումը,շատ խնդիրներ կառաջանան,ուստի պետք է լավ պատրաստվել դրան:

Նիշը՝ միավորը,որքան էլ հարաբերականորեն արտահայտի գիտելիքի մակարդակը,այնուամենայնիվ ունի ուժ՝ սթափեցնող,մոտիվացնող,մրցունակ դարձնող,տարբերակող։

Քննարկելով,հակադրելով ու համադրելով գնահատման միավորային և ձևավորող տեսակները՝ համոզվում ենք,որ դրանք կարելի է զուգահեռաբար կիրառել։ Կարելի է հենվել առավելությունների վրա՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը սովորողի ուսման որակի բարելավման գործում։

Կրկին հավաստում ենք, որ միավորային և ձևավորող գնահատումները իրար լրացնում են,չեն հակասում և կարող են կիրառվել միաժամանակ։

Օգտագործված գրականության ցանկ

1.Սիփան Հայրապետյան,Կարեն Նազարյան, Զավեն Տոնոյան- <<Սոցիալական հավասարությունը և արդարությունը դպրոցում>>, Երևան,2020թ.:
2.Տաթևիկ Մարաբյան, Նունե Դիշաղաջյան-<<Ձևավորող գնահատում>>, Վանաձոր,2022թ.:
3.Օ.Ս. Միքայելյան-<<Ընթացիկ գնահատման նոր համակարգը որպես կրթության որակի բարելավման խթան>>,Երևան,2010թ.:
4.<<ՀՀ Կառավարության 2010թ Ապրիլի 8-ի N439 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծ:
5.kznakgnahatum.blogspot.com